



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅ ԾԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Յուլիս 2011 - Յուլիս 2013

ԵՐԿԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
Ներկայացուած՝
ՀՕՄ-ի 93-րդ ևի Գանատայի Շրջանի 21-րդ Պատգամադրական ժողովին
5, 6 և 7 Յուլիս, 2013
ԹՈՐՈՆԹՈ

ՀՕՄ-Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Երկամնայ Տեղեկագիր
2011–2013

Հայ Օգնության Միության Գանատայի Շրջանային Վարչության 2011-2013 նստաշրջանի առաջին ժողովը տեղի ունեցավ 20-րդ Պատգամաւորական Ժողովի ասարտին, Կիրակի 3 Յուլիս, 2011-ին, Մոնթրեալի Հայ Կենդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչության շրջանաւարտ եւ նորընտիր կազմին եւ Պատգամաւորական Ժողովի դիւանի ատենապետներ՝ ընկհ. Հուրի Նաճարեանի եւ Արմինէ Կարապետեանի, ատենադպիրներ՝ ընկհ. Անի Պապիկեանի եւ Զեփիւտ Տորնայի:

Ժողովը միաձայնութեամբ կատարեց վարչական պաշտօններու բաժանումը հետեւեան ձեւով.-

Ատենապետ՝	Ընկհ. Աննա Պուլկարեան	Մոնթրեալ
Փոխ-ատենապետ՝	Ընկհ. Սեդա Մալխասեան	Մոնթրեալ
Քարտուղար՝	Ընկհ. Անի Օհանեան	Լաւալ
Հաշուապահ՝	Ընկհ. Ժօժօ Պետրոսեան	Լաւալ
Գանձապահ՝	Ընկհ. Վարդուկ Պէզճեան	Մոնթրեալ
Խորհրդական՝	Ընկհ. Իռեն Թիլիմեան	Թորոնթօ
Խորհրդական՝	Ընկհ. Յասմիկ Բաքիսեան	Թորոնթօ

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի 20-րդ Պատգամաւորական ժողովին փոխ անդամներ ընտրուեցան .-

Մոնթրեալ	
Ա. Փոխ անդամ	Ընկհ. Մարկօ Մելքոնեան
Բ. Փոխ անդամ	Ընկհ. Անի Թաշճեան
Թորոնթօ	
Ա. Փոխ անդամ	Ընկհ. Տիգրանուհի Բէնտիրճեան
Բ. Փոխ անդամ	Ընկհ. Բեննա Թարգի

ԿԱՉՄԱԿԵՐՊԱԿԱՆ

Ժողովներ - Շրջանային Վարչություն

Յուլիս, 2011 - Յուլիս, 2013 տարեշրջանի պաշտոնավարության ընթացքին, Շրջանային Վարչությունս գումարեց 19 լիազուսար ժողովներ, առաել շաբաթական դրութեամբ աշխատանքային օրեր: Վարչութիւնս հրաւիրեց փոխ անդամներ՝ ընկերուհիներ Մարկօ Մելքոնեանն ու Անի Թաշճեանը ներկայ գտնուելու մեր 6-րդ լիազուսար ժողովին Մոնթրէալ:

Վարչութեանս լիազուսար ժողովներու ընթացքին, օրակարգերը կ'ընդգրկէին՝ ՀՕՄ-ի 20-րդ Պատգամաւորական Ժողովէ փխած բանաճեւերու իրագործում, Շրջանային վարչութեան տարեկան ծրագիրները, Սրտէ Սիրտ, Գրպանի օրացոյց-գրքոյկ, Հեռաճայնի գրքոյկ, Լրատու, կայքէջ, Մեմիւնար, Կրթաթոշակ, կրթական օճախներ, Գանատայի տասը մասնաճիւղերու գործունէութիւն, հաշուական ու քարտուդարական աշխատանքներ, Միջ-վարչական հանդիպում, Աստրալիոյ սեմինար-շրջապտոյտ, Հայաստանագնացութիւն, Յեղասպանութեան 100-ամեակ եւ ժողովիս ուշադրութեան յանճնուած այլ հարցեր:

ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան ծրագիրներէն բխած օրակարգերն էին՝ Հարիւրամեակի Յուշամատեան, Որբերու Խնամակալութեան Ծրագիր, Որբերու Ուսման Ծրագիր, Երեմեան Կրթաթոշակ, Լուսագոյն Ուսանող Ծրագիր, Սօսէ Մանկապարտէզներ, Ախուրեանի Մօր ու Մանկան Առողջապահական Կեդրոն/Ծննդատուն, Միջերկրական նաւապտոյտ, Ամանոր Ծրագիր, Զաւալքի Բազմազաւակ ընտանիքներու օճանդակութիւն, Հաւաքական Մկրտութիւններ, Ծարադրութեան Սրցոյթ, Պատանիներու փոխանակման Ծրագիր, Պուլկարիոյ մանուկներու եւ չափահասներու հայերէնի դասընթացքներ, Հալէպի Համազգայնի յարան, Սուրիահայրութեան օճանդակութիւն, Որբախնամ ծրագրի 20-ամեակի հանդիսութիւն, Կեդրոնական Վարչութեան Վիճակահանութիւն եւ այլ անմիջական հարցեր:

Վարչութիւնս բճախնդրութեամբ քննեց իրաքանչիւր հարց, իրականացած աշխատանք, յատկապէս 20-րդ Պատգամաւորական ժողովին որդեգրուած ծրագիրներու կիրարկման վերաբերող հարցեր եւ կայացուց որոշումներ:

Շրջանային վարչութեանս գործունէութեան բարոյական եւ նիւթական բաժնի բոլոր մանրամասնութեանց գրաւոր պատճէնները կը մնան վարչութեանս արխիւներուն մէջ, որոնք տրամադրելի են պատկարելի այս ժողովին առ ի քննարկում եւ արժեւորում:

Վարչութիւնս իր առաջին ժողովին, գրասենեկային հաշուական եւ օրինական վաւերաթուղթերու ներկայացման աշխատանքներուն համար վերահաստատեց հաշուապահ՝ պարոն Մուրատ Արմուշլուն CA եւ իրաւաբան՝ պարոն Արմենակ Գազանճեանը:

Ներկայացուցչական Դրութիւն

Մասնաճիւղերուն հետ մնայուն կապ պահելու, աշխատանքները հետապնդելու, ուղղութիւն տալու եւ խորհրդակցելու միտումով, վարչութիւնս վերահաստատեց ներկայացուցչական դրութիւնը եւ հետեւեալ ներկայացուցիչները նշանակեց մասնաճիւղերու մօտ. այսպէս.-

Ընկհ. Բաքիսեան Յասմիկ	Համիլթըն՝ «Արեւ» Սէնթ Գաթրինգ՝ «Արագ» Գէմպրիճ՝ «Մեղրի»
Ընկհ. Թիլիմեան Իռեն	Թորոնթօ՝ «Ռուբինա» Միսիսոկա՝ «Առագաստ»
Ընկհ. Պետրոսեան Անժէլ	Լաւալ՝ «Շուշի»
Ընկհ. Մայլասեան Սեդա	Օթթաուա՝ «Սեւան» Ուինձըր՝ «Ռուբինա»
Ընկհ. Պուլկարեան Աննա	Վանգուվըր՝ «Արագ»
Ընկհ. Պէզճեան Վարդուկ	Մոնթրէալ՝ «Սօութ»

Մասնաճիւղերու այցելութիւններ

Երկամեայ մեր շրջանի ընթացքին, Շրջանային Վարչութիւնը հանգամանօրէն քննեց մասնաճիւղերու գործունէութիւնները՝ հայթայթեց տեղեկութիւններ եւ ի պահանջեալ հարկին՝ թելադրութիւններով եւ ցուցմունքներով ապահովեց բոլորին ներդրումն ու աշխոյժ մասնակցութիւնը:

Մասնաճիւղերու այցելութիւնները կատարուեցան հետեւեալ ժամանակացոյցով.-

Օթթաուա՝ «Սեւան»	30 Հոկտեմբեր 2011	
Թորոնթօ՝ «Ռուբինա»	18 Նոյեմբեր 2011	
Սէնթ Գաթրինգ՝ «Արագ»	19 Նոյեմբեր 2011	
Համիլթըն՝ «Արեւ»	19 Նոյեմբեր 2011	
Ուինձըր՝ «Ռուբինա»	19 Նոյեմբեր 2011	
Գէմպրիճ «Մեղրի»	20 Նոյեմբեր 2011	
Միսիսոկա՝ «Առագաստ»	20 Նոյեմբեր 2011	
Մոնթրէալ՝ «Սօութ»	14 Յունուար 2012	Փետրուար 2013
Լաւալ՝ «Շուշի»	15 Յունուար 2012	Փետրուար 2013
Վանգուվըր՝ «Արագ»	26 Յունուար 2013	

Այս այցելութիւնները տեղի ունեցան մասնաճիւղերու վարչական կամ անդամական ժողովներուն, ուր արծարծուեցան իւրաքանչիւր շրջանի մտահոգութիւններն ու դժուարութիւնները, անդամական վիճակը, ՀՕՄ-ի քարոզչական աշխատանքի կարեւորութիւնը, վարչութիւններու նիւթական պարտաւորութիւնները: Հոն ներկայացուեցան նաեւ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի եւ Կեղրոնական Վարչութեան ծրագիրները:

Ընկհ. Աննա Պուլկարեան, 3 Ապրիլ 2012-ին ներկայ գտնուեցաւ Թորոնթոյի մասնաճիղի անդամական ընդհանուր ժողովին ուր փոխանցեց Երջ. Վարչութեան ծրագիրները եւ 70-րդ Համահայկական Պատգամատրական ժողովի տեղեկութիւնները, բանաձեւերը, որոշումներն ու ծրագիրները :

Յարաբերակաւ

Վարչութիւնս լրիւ կամ մասնակի կազմով ներկայ գտնուեցաւ մասնաճիղերու անդամական ժողովներուն, ձեռնարկներուն եւ անոնց հիմնադրութեան տօնակատարութեանց:

Միացեալ ժողով

Վարչութեանս հրաւերով, Մոնթրէալի Աւետիս Ահարոնեան սրահին մէջ տեղի ունեցան միացեալ ժողովներ, Երեքշաբթի 1 Նոյեմբեր 2011-ին եւ Երեքշաբթի 6 Նոյեմբեր, 2012 ին, մասնակցութեամբ Լաւալի Ծուշի եւ Մոնթրէալի Սօւէ մասնաճիղերուն: Միացեալ ժողով մը կայացաւ նաեւ Թորոնթոյի հայ կեդրոնէն ներս՝ Ուրբաթ 19 Հոկտեմբեր, 2012-ին Թորոնթոյի, Օթթաուայի, Համիլթընի եւ Միսիսսոկայի մասնաճիղերու մասնակցութեամբ:

Ժողովներու ընթացքին ներկայացուեցան Երջանային եւ կեդրոնական Վարչութեան ՀՕՄ-ի ծրագիրները, եւ ձեռնարկներու ընդհանուր պատկերը ինչպէս նաեւ ՀՕՄ-ի Կ. Վարչութեան 70-րդ Համահայկական Պատգամատրական ժողովի տեղեկութիւնները ու անկէ փխած որոշումներն ու ծրագիրները:

Միջ-Վարչական Հանդիպում

Եւրբաթ 20 Հոկտեմբեր 2012ին՝ Թորոնթոյի հայ կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Երջանային վարչութեան Միջ-Վարչական ժողովը ներկայութեամբ 52 անդամներու ներառեալ Երջանային Վարչութեան եւ կեդրոնական Վարչութեան փոխատենապետ ընկհ. Նայիրի Ծահինեանի:

Ժողովին՝ Երջանային վարչութեան անդամներուն կողմէ ներկայացուեցան վարչական պաշտօնները:

Թորոնթոյի ՀՅԴ ԳԵՄ-ի անդամներէն Ծահէ Բաբիսեան, Facebook-ի մասին տեղեկութիւններ փոխանցեց ներկաներուն, անոր գործածութեան եւ ապահովութեան մասին:

Յաջող եւ հետաքրքրական էր նաեւ ընկհ. Անի Հոթոյեան-Ժօլիի ներկայացուցած դասախօսութիւնը՝ «Communication, Teamwork, Leadership» նիւթին շուրջ:

Գործիչային Աջիատանք

Հիմնուելով ՀՕՄ-ի 91-րդ եւ Գանատայի 20-րդ Պատգամատրական ժողովի 11-րդ բանաձեւին, եւ նկատի ունենալով փոքր մասնաճիղերու անդամական թիւի նուազումը, յատկապէս Սէնթ Գաթրինգի եւ Համիլթընի մէջ, Վարչութիւնս փորձառական ծրագիր մը սկսաւ, յատուկ յանձնախումբ մը նշանակելով գլխատրութեամբ Երջանային Վարչութեան մօտ ներկայացուցիչ ընկհ. Նաթալի Մանուկեանի Համիլթընէն:

Սոյն ծրագրի նպատակն էր ցանկագրել եւ ճշդել Համիլթոնի եւ Ս.Գաթրինգի տարածաշրջանին մէջ ապրող հայերու թիւը:

- Յանձնախումբը պատրաստեց գրանցումի հարցարաններ, որոն մօտեցումը որդեգրուած էր Գանատայի մարդահամարի սկզբունքներու հիմունքներուն վրայ:
- Հարցարանները գետնից Գանատայի Շրջանային Վարչութեան կայքէջին վրայ եւ ծանուցումը տեղ գտաւ 2012-ի Լրատուի թիւին մէջ: Օգտագործուեցան նաեւ տարբեր տեղեկատուական միջոցներ ծանօթացնելու համար ծրագրի մանրամասնութիւնները, ինչպիսին են՝ տարեկան դաշտահանդէս, ռատիօժամ, եւ հայկական հաստատութիւններ:
- Առ այժմ ցանկագրուած են արդէն Համիլթոնի հայ համայնքէն ներս գործող անհատներն ու իրենց անմիջական ընտանեկան պարագաներու տունակները: Անհրաժեշտ էր նաեւ ապահովել ցանկագրուած անհատներուն գործակցութիւնը ընդլայնելու համար աշխատանքի գործընթացը:

Յանձնախումբին գործընթացը եղաւ դժուար, չկարողացան հարկ եղած հետաքրքրութիւնը ստեղծել: Ս.Գաթրինգի համայնքը չկարողացաւ իր ներդրումը բերել այս ծրագրին իրենց գաղութային աշխատանքներով ծանրաբեռնուած ըլլալուն պատճառաւ:

Ընդհանուր մտահոգութիւնն էր գրանձումի տունակներու ապագայի օգտագործման (solicitation) կապակցաբար:

Մասնաճիւղերու Հիմնադրութեան Տարեդարձեր

2013 տարին, բարեբաստիկ եւ յատկանշական եղաւ ՀՕՄ-ի Գանատայի շրջանին համար: Յատկանշական այն իմաստով, որ այս տարեշրջանին մեր մասնաճիւղերը մեծ թիւով նորագրեցանքներու անդամակցութիւնը ապահովեցին ՀՕՄ-ի շարքերէն ներս եւ անոնցմէ չորսը՝ իրենց հիմնադրութեան կարեւոր ամեակները տօնեցին:

Այսպէս՝

- Համիլթոնի «Արեւ» մասնաճիւղը տօնեց իր հիմնադրութեան 100-ամեակը.
- Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղը տօնեց իր վերահիմնադրութեան 50-ամեակը.
- Լաւալի «Շուշի» եւ Օթթաուայի «Սեւան» մասնաճիւղերը տօնեցին իրենց 20-ամեակները:

Պէտք է յիշել նաեւ թէ՛ Վանգուվրի «Արագ» մասնաճիւղը, որ 2012-ին ամբողջացուցած էր իր 35-ամեակը, այս տարի յատուկ տօնախմբութեամբ պիտի նշէ զայն:

ՀՕՄ-ի Ննջեցեալներու Հոգեհանգիստ

Վարչութեանս խնդրանքով, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի կոչը ուղղուեցաւ Գանատայի Կիլիկիոյ Թեմի Առաքելական բոլոր եկեղեցիներուն, ուր հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ՀՕՄ-ի շարքերէն առ յաւէտ բաժնուած ընկերուիներու ու բարերարներու յիշատակին իսկ

Օթթաուայի, Համիլթընի եւ Միսիսսկայի մասնաճիւղերը հոգեհանգստեան պաշտօնները կատարեցին տեղոյն Էջմիածնական թեմի եկեղեցիներուն մէջ:

Հայաստանագնացութիւն

Վարչութիւնս Սեպտեմբեր 2012-ին ի մտի ունէր Հայաստան շրջապտոյտ մը կազմակերպել, ներկայ գտնուելու Որբերու Խնամակալութեան 20-ամեակի միջոցառումներուն, սակայն նկատի ունենալով հանդիսութեան թուականի անորոշութիւնը եւ մասնակցողներու թիւի անբարարարութիւնը, զանց առաւ այս ծրագրի իրագործումը:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Քարտուղարական առաջուած գրութիւններ

□ ՀՐՋԱՔԵՐԱԿԱՆՆԵՐ

2011-2013 տարեշրջանի ընթացքին, ՀՕՄ-ի Գանատայի մասնաճիւղերուն առաքուեցան 37 շրջաբերականներ, 20-րդ Պատգամատրական ժողովի բանաձեւերը իրագործելու, անմիջական ծրագիրներ յայտարարելու եւ տեղեկութիւններ փոխանցելու համար:

□ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ԲԱՅՐԿՆԵՐ

Վարչութիւնս իր երկամեայ գործունէութեան ընթացքին առաքած է 1249 նամակներ, 64 բացիկներ ուղարկեց զանազան առիթներով մեր անմիջական շրջապատին մէջ գործող ընկերուիներուն, ուղեկից կազմակերպութիւններուն եւ մարմիններուն: Երջանային Վարչութեան ներկայ եւ նախկին վարչական անդամներուն եւ մեր յանձնախումբերու ընտանեկան անմիջական պարագաներու կորուստի տխուր առթիւ, Հորիզոն Ծաբաթաթերթին մէջ մեր վշտակցութիւնները յայտնեցինք:

Պէտք է նշենք, որ վերոյիշեալ թիւերը չեն ներառեր մեր ամենօրեայ ելեկտրոնային նամակագրութիւնները:

Ստացուած Գրութիւններ

□ ՆԱՄԱԿՆԵՐ

Այս նստաշրջանի ընթացքին վարչութիւնս ստացած է 242 նամակներ եւ 30 բացիկներ:

□ ԿԵՂՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀՐՋԱՔԵՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՅՈՒՇԱՍԹԵՐ

ՀՕՄ-ի կեղորոնական վարչութենէն ստացած ենք 58 շրջաբերականներ, 17 Յուշանօթեր, 18 Ե-նամակներ, 65 նամակներ եւ 24 մամլոյ հաղորդագրութիւններ: Վարչութիւնս օրին ընթացք տուած է կեղորոնական վարչութեան կողմէ յղուած բոլոր շրջաբերականներուն եւ յուշանօթերուն, նրբեմն հայցելով մասնաճիւղերու օժանդակութիւնը:

ՄԱՍՆԱԾԻՂԵՐ

Գործունեություն

Երկամսյա այս շրջանի ընթացքին, Շրջանային Վարչությունը մասնաճիղերուն հետ գործակցաբար շարունակեց իրագործել 20-րդ Պատգամաւորական ժողովի բանաձեւերը:

Մեր տասը մասնաճիղերը իրենց գործօն մասնակցությունը բերին Գանատահայ գաղութի ազգային-քաղաքական կեանքին:

Կազմակերպեցին ճաշկերոյթ, խրախճանք, պարահանդէս, քայլարշաւ, ճաշերու դասընթացք, տօնավաճառ, ասանդական եւ կրօնական բնոյթով ընկերային հաւաքոյթ եւ այլ ձեռնարկներ, որոնց հասոյթով կրցան նիւթական յատկացումներ կատարել թէ՛ Հայրենիքի եւ թէ՛ իրենց շրջաններու մէջ օտար կազմակերպութիւններուն, գաղութի կրթական օճախներուն, Հայ կեդրոններուն եւ քոյր միութիւններուն:

Դաստիարակչական եւ անդամարշաւի նպատակով, մասնաճիղերը կազմակերպեցին առողջապահական եւ ընկերային նիւթերու շուրջ դասախօսութիւններ, ինչպէս նաեւ ՀՕՄ-ի գործունէութիւնը ծանօթացնող քարոզչական ձեռնարկներ եւ զանազան առիթներու՝ հրապարակային ելոյթներ: Միասնաբար գումարեցին ժողովներ եւ կազմակերպեցին ՀՕՄ-ի Օրուան տօնակատարութիւն, Կանանց Միջազգային Օր, ինչպէս նաեւ փոխադարձ այցելութիւններով խանդավառեցին զիրար, տօնական օրերու կամ յատուկ ձեռնարկներու առիթներով: Հոս յատկապէս պէտք է յիշել մեր մասնաճիղերու հիմնադրութեան տօնակատարութիւնները:

Մասնաճիղերու վարչութիւնները իրենց հերթական ժողովները գումարեցին ընդհանրապէս շաբաթական դրութեամբ, իսկ անդամական ժողովները՝ ամսական դրութեամբ:

Մասնաճիղերը իրենց նիւթական պարտաւորութիւնները կատարեցին Շրջանային վարչութեան, եւ ըստ մեր բանաձեւերու տրամադրութեանց՝ օժանդակեցին եւ գործնականօրէն մասնակցեցան ՀՕՄ-ի կեդրոնական վարչութեան ծրագիրներուն:

ՄԱՍՆԱՃԻՒԴԵՐՈՒ ԹՈՒԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ

2011 - 2013

	Անդամներ				Ժողովներ 2011/2013	
	Նոր 2011/12	Նոր 2012/13	Ընդհանուր 2011/12	Ընդհանուր 2012/13	Անդամական	Վարչական
Արևի Համիլթոն	-	-	34	32	20	38
Մեդրի Գեմպրիճ	-	3	31	30	14	18
Մնուան Օթթաուա	-	4	43	47	14	16
Առագաստ Միսիսոկա	-	1	29	28	15	10
Արագ Սենթ Գաթրինգ	-	-	19	18	12	6
Ռուբինա Ուինձոր	-	-	20	20	17	14
Շուշի Լաուալ	2	27	215	247	18	74
Արագ Վանգուվր	-	2	40	42	14	14
Ռուբինա Թորոնթո	16	24	389	403	24	97
Սուէ Մոնթրեալ	4	11	391	392	18	79
ԸՆԴՀԱՆՈՒՐ	22	72	1,211	1,259	166	366

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յարաբերական

ՀՕՄ-ի Կնդրոնական Վարչության հետ մեր յարաբերությունները եղած են միշտ սերտ:

Ընթացք տուած ենք Կնդրոնական Վարչության յղած շրջաբերականներուն, նամակներուն եւ յուշանօթներուն, եւ ի պահանջնալ հարկին զանոնք փոխանցած ենք մեր մասնաճիւղներուն եւ անդամներուն:

2011-2013 երկամեայ շրջանի մեր նիւթա-բարոյական գործունէութեան բոլոր տունալները անյապաղ յղած ենք Կնդրոնական Վարչութեան :

Պաշտօնական նամակագրութեան կողքին, վարչութիւնս հեռաձայնային հաղորդակցութիւններով, ե-նամակներով եւ skype-ով կապ հաստատած է Կնդրոնական Վարչութեան հետ:

ՀՕՄ-ի Կնդրոնական Վարչութեան փոխ-ատենապետ ընկի. Նայիրի Ծահինեան, հեռաձայնային հաղորդակցութեամբ եւ skype-ով մաս կազմեց վարչութեանս լիազումար նիւտներէն ոմանց, խորհրդակցելու եւ ՀՕՄ-ի Կ.Վարչութեան ծրագիրները փոխանցելու:

Հայաստան Համահայկական Հիմնադրամ

2011-2013-ին, Գանատայի շրջանէն հետեւեալ մասնաճիւղերը իրենց մասնակցութիւնը բերին իրենց շրջանի «Հայաստան Համահայկական Հիմնադրամ»-ի վարչութեանց .-

Թորոնթօ Ռ-ուբինա	1,000 տոլար
Լաուալ Շուշի	300 տոլար
Մոնթրէալ Սօւէ	2,000 տոլար

Վարչութիւնս Կնդրոնական Վարչութեան Միջոցաւ կատարեց իր յատկացումը 2,000 ամ. տոլար (տարեկան 1000 տոլարի դրութեամբ):

Հ.Հ.Հիմնադրամի Մոնթրէալի վարչութեան մօտ ՀՕՄ-ի ներկայացուցիչն է ընկի. ֆլորա Կիրակոսեան: Հ.Հ.Հիմնադրամի Թորոնթոյի վարչութեան մօտ ՀՕՄ-ի մնայուն աթօռի ներկայացուցիչն է ընկի. Հուրի Նաճարեան:

Պատանիներու Փոխանակման Ծրագիր

Յուլիս 2011-ին Թորոնթոյէն 2 պատանիներ՝ Արեգ Թօթ եւ Նուպար Նախնիքեան, Լաուալէն՝ Արամ Անասալ եւ Քէվին Ծահպագի մասնակցեցան Ֆրանսայի Կապոյտ Խաչ-ի Պելֆոնթէն Կայանի ճամբարին, իսկ Օգոստոս 2011-ին, Մոնթրէալէն Սարին

Պէզճեան եւ Լաւալէն Ճորճիկ Պարսէմեան մասնակցեցան Արեւելեան Ամերիկայի Հ.Ե.Դ.-ի՝ Պոսթընի մէջ կայացած «Գամբ Հայաստան» ամառնային ճամբարին: Օգոստոս 2012-ին, Մոնթրէալէն Լիանա Գալուստեան եւ Իննա Արուշեան Նեվլըն, մասնակցեցան Պոսթընի ՀԵԴ «Գամբ Հայաստան» ամառնային ճամբարին:

ՀՕՄ-ի Երեսեան Կրթաթոշակ

2012 տարեշրջանին, Գանատայի շրջանէն հետեւեալ ուսանողները ստացան ՀՕՄ-ի Երեսեան Կրթաթոշակը՝ Տէր-Պօղոսեան Ատրիինէ, Առաքելեան Մարիամ եւ Եսայեան Վարսան:

ՀՕՄ-ի «Ամանոր Ծրագիր»

ՀՕՄ-ի Համահայկական 70-րդ Պատգամաւորական Ժողովի բանաձեւին առ ի գործադրութիւն, Նոր Տարուան առիթով կադանդչէք կը տրամադրուի հայրենիքէն ներս թէ սփիւքեան գաղութներու մէջ գործող եւ կարիքաւորներու ծառայող հիմնարկներու: Այս նպատակով, վարչութիւնս իւրաքանչիւր անդամի համար 3 տոլարի դրամահաւարի պարտաւորութիւնը կատարեց, երկու տարուայ համար 7,242 ամ. տոլար փոխանցելով Կեդրոնական Վարչութեան: Սոյն գումարը գոյացաւ մասնաճիւղներու ներդրումով:

ՀՕՄ-ի «Լաւագոյն Աջակերտ» Ծրագիր

Այս ծրագրին համար վարչութիւնս 4,000 ամ. տոլար (տարեկան 2,000 տոլարի դրութեամբ) փոխանցեց Կեդրոնական Վարչութեան հովանաւորելով 40 աշակերտ:

ՀՕՄ-ի Որբերու Խնամակալութեան Ծրագիր

Կեդրոնական վարչութեան փոխանցած ենք 226 ծնողագուրկ երեխաներու յատկացումներու գումարը 2011-2012 տարեշրջանի համար, որ կը համապատասխանէ 45,200 ամ.տոլարի, իսկ 2012-2013 տարեշրջանին փոխանցեցինք 47,200 ամ.տոլար 236 երեխաներու յատկացում: Այս յատկացումները վարչութիւնս Կեդրոնական Վարչութեան կը կատարէ ամէն տարի երկու մասնավճարներով, առաջինը՝ 31 Դեկտեմբերին, իսկ երկրորդը՝ 31 Մայիսին:

ՀՕՄ-ի Որբերու Ուսանող Ծրագիր

2011-2013-ին 80 ուսանողի օժանդակութեան գումարը 25,600 ամ.տոլար փոխանցած ենք Կեդրոնական Վարչութեան:

Պուկարիա

Ընդառաջելով Կեդրոնական Վարչութեան թիւ 12 շրջաբերականին «Կեդրոնական Վարչութեան Ֆինանսաւորում» նիւթին շուրջ ինչպէս նաեւ Համահայկական Պատգամաւորական Ժողովէ փխսած բանաձեւին, վարչութիւնս Պուկարիոյ ՀՕՄ-ի

Մանկապարտեզներուն նուիրեց 1,000 ամ. տոլար (տարեկան 500 ամ.տոլարի դրութեամբ), իսկ Մեծահասակներու համար հայերէնի դասընթացներուն 1,000 ամ.տոլար (տարեկան 500 տոլարի դրութեամբ):

Սուրիա

Դարձնալ ընդառաջելով թիւ 12 շրջաբերականին եւ Կ.Վարչութեան բանաձեւին, Հալէպի Համազգայինի Հայագիտական Հիմնարկին նուիրեցինք տարեկան 500 ամ.տոլար:

Dorcas-Aid

Ընդառաջելով Կեդրոնական Վարչութեան թիւ 83 Ծրջաբերականին, 1,000 ամ. տոլարով նպաստեցինք Ափրիկէի սովահարներու ծրագրին:

ՀՕՄ-ի Միջերկրական Նաւապտոյտ

Յուլիս 2012-ի նաւապտոյտին մեր շրջանէն 39 հոգի մասնակցեցան. նպաստելով այս ձեռնարկի յաջողութեան: Տրուած ըլլալով, որ ընկերուիներ Արմինէ Կարապետեան եւ Ռ-իթա Օհանեան պիտի մասնակցէին այս նաւապտոյտին, Կ. Վարչութիւնը զիրենք նշանակեց օգնելու նաւապտոյտի պատասխանատու ընկի. Ծաքէ Պասմաճեանին, նաւուն վրայ տարուելիք աշխատանքներուն համար:

Ծրջանային Վարչութեան անդամ ընկի. Անի Օհանեան նաւապտոյտի ընթացքին տեղի ունեցած զեկուցական հանդիպման, Գանատայի Ծրջանի գործունէութեան մասին տեղեկութիւններ փոխանցեց մասնակցողներուն:

Աւստրալիոյ Ծրջապտոյտ – Սեմիսար

ՀՕՄ-ի Աւստրալիոյ Ծրջանի կազմակերպած Ծրջապտոյտ - սեմինարը տեղի ունեցաւ 2- 3 Մարտ 2013-ին, իսկ Ծրջապտոյտը շարունակուցաւ մինչեւ 16 Մարտ 2013:

Վարչութիւնս օրին փոխանցեց բոլոր մանրամասնութիւնները եւ Կ. Վարչութեան ուղարկած շրջաբերականներն ու տեղեկութիւնները մեր բոլոր մասնաճիւղերուն:

Ծրջանային Վարչութենէս ընկի. Իռէն Թիլիմեան եւ մեր շրջանէն 12 անդամներ եւ համակիրներ մասնակցեցան այս սեմինարին: Աւստրալիոյ շրջանը ջանք չէր խնայած բծախնդրօրէն կազմակերպելու այս սեմինարը: Մասնակցողները յատկապէս գնահատեցին դասախօսներն ու նիւթերը, պտոյտները եւ ընկերային հաւաքոյթները: Այս առթիւ Աւստրալիոյ Ծրջանային Վարչութեան նուիրեցինք 500 ամ.տոլար:

ՀՕՄ-ի Քայլերգ

Կեդրոնական Վարչութենէն ստացանք ՀՕՄ-ի Քայլերգի խտասալիկներէն 20 օրինակ: Մեր մասնաճիւղերուն դրեցինք մէկական օրինակ, իրենցմէ խնդրելով բազմագրել եւ յետայսու այդ օրինակը օգտագործել ՀՕՄ-ի ձեռնարկներուն:

Կեդրոնական Վարչութեան Վիճակահանութիւն

Կեդրոնական Վարչութեան Վիճակահանութեան ծրագրին, Գանատայի Շրջանային Վարչութիւնս իր բոլոր մասնաճիւղերու ներդրումով կարողացաւ 25,000 ամ. տոլարի արժողութեամբ վիճակահանութեան տոմսեր սպառել, որ ամբողջութեամբ փոխանցեցինք Կեդրոնական Վարչութեան:

Հայաստան

□ ԱՌՈՒԻԵԱՆԻ ՄՕՐ ՈՒ ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՂՐՈՆ/ԾՆՆՊԱՏՈՒՆ 2011-2013 տարնշրջանին՝ Թորոնթոյի «Ռ-ուիքնա», Վանգուվրի «Արագ» եւ Մոնթրէալի «Սօւէ» մասնաճիւղերը իրենց մասնակցութիւնը բերին Մօր ու Մանկան Առողջապահական Կեդրոն-Ծննդատան, կազմակերպելով «Քայլարշաւ» եւ այլ ձեռնակներ:

Նաեւ Զանազան առիթներով ազգայիններ նուիրատուութիւններ կը կատարեն այս կեդրոնին:

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանը Ապրիլ 2013-ին փոխանցեց 15,000 ամ. տոլար օժտելով կեդրոնը նոր Ultrasound-ի սարքով մը:

Արցախ

□ ՀՕՄ-Ի ԱՐՅԱՆԻ »ՍՕՒԷ« ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

Արցախի Հաղորդի Մեծ Թաղեր գիւղի ՀՕՄ-ի Սօւէ մանկապարտէզի ծրագրին վարչութիւնս նախատեսուած պիտոճէին համաձայն կատարեց իր տարեկան յատկացումը:

- 2011-2012-ին \$19,000
- 2012-2013-ին \$25,308

Մոյն գումարներուն կ'աւելնայ նաեւ ՀՕՄ-ի ԱՄՆ-ի Արեւելեան շրջանի տարեկան մնայուն 12,000 ամ.տոլարը եւ Արցախի կառավարութեան տարեկան յատկացումները:

□ ԱՐՅԱՆԻ ԱՃԱՌԱՅԻՆ ԸՆԴՈՒՄ

Հպարտութեամբ կ'ուզենք յայտնել թէ՛ 2012-ի ամրան՝ Արցախի ամառնային ճամբարի հովանաւորութիւնը սիրով ստանցնեց Միսիսսոկայի Առագաստ մասնաճիւղը նուիրելով 2,000 ամ.տոլար: 10 օրուայ այս ծրագրին մասնակցեցան 100 երեխաներ:

Զաւախք

Շրջանային վարչութիւնս իր տասը մասնաճիւղերով տարեկան յատկացումներէն անկախ, ընդառաջեց նաեւ ՀՕՄ-ի կեդրոնական վարչութեան Զաւախքի օգնութեան նոր ծրագիրներուն:

Այսպէս՝ ՀՕՄ-ի Զաւախքի Ֆոնտին յատկացուցինք 10,000 ամ.տոլար, Զաւախքի միաւորի հիմնադրութեան 10-ամեակին առթիւ նուիրեցինք 500 ամ.տոլար,

Բազմազան ընտանիքներուն՝ 2,500 ամ.տոլար, Հաւաքական Մկրտութիւններուն 1,000 ամ.տոլար, Շարադրութեան մրցումին 1,000 ամ.տոլար:

Թորոնթոյի Ռուբինա մասնաճիւղի Տոնիկ Օրուայ հասոյթէն (նուիրուած Զաւախքին), 2,050 ամ.տոլար փոխանցուեցաւ «Բազմազան ընտանիքներ»ու ծրագրին:

ՀՕՄ-ի Սուրիահայութեան Օժանդակութիւն

ՀՕՄ-ի Կնէրոնական Վարչութեան «Սուրիահայ Վարժարաններու Օժանդակութեան Ֆոնտ»-ին մասնակցեցանք 18,000 ամ.տոլարով մեր տասը մասնաճիւղերով:

Շաբաթական երկու օրուայ «Տաք Ճաշ» ծրագրին օժանդակեցինք 12,000 ամ.տոլարով:

Մեր բոլոր մասնաճիւղերը նաեւ ջանք չլնայեցին եւ մասնակցեցան տեղական հանգանակային ձեռնարկներուն:

ՀՕՄ-ի 70-րդ Համահայկական Պատգամաւորական Ժողով

ՀՕՄ-ի 70-րդ Պատգամաւորական ժողովին, Գանատայի Երջանը մասնակցեցաւ 4 պատգամաւորներով՝ ընկերուիներ Նայիրի Շահինեան եւ Հուրի Նաճարեան Թորոնթոյէն, Սնդա Մալխասեան եւ Արմինէ Կարապետեան Մոնթրէալէն: Երջանային վարչութեան ներկայացուցիչն էր ընկ. Աննա Պուկարեան: Ժողովին հիւր ընտրուեցան Թորոնթոյէն՝ ընկերուիներ Վարսենիկ Սարգիսեան եւ Գեղուիկ Պաթաճեան: Ժողովէն վերադարձին, պատգամաւորները լայն տեղեկութիւններ փոխանցեցին Համահայկական ժողովի ընթացքի մասին, ուր Գանատայի շրջանի բոլոր պատգամաւորները իրենց ներդրումը ունեցած են ժողովի բոլոր յանձնախումբերուն մէջ: Կնէրոնական Վարչութեան յաջորդ քառամեայ շրջանին համար Գանատայէն Կնէրոնական Վարչութեան անդամ ընտրուեցաւ ընկ. Նայիրի Շահինեան:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ

ՀՕՄ-ի Շրջաններ

ՀՕՄ-ի այլ շրջաններու հետ կապ հաստատած ենք նամակագրութեամբ հրաւիրելով զիրենք Պատգամաւորական ժողովներու եւ Սեմինարներու:

ՀՕՄ-ի ԱՄՆ-ու Արեւմտեան եւ Արեւելեան Երջաններէն ստացանք Պատգամաւորական ժողովներու հրաւերներ: Սակայն այս նստաշրջանին կարելի չեղաւ ներկայացուցիչ ուղարկել: Այս առթիւ՝ նամակով մեր լաւագոյն բարեմաղթութիւնները փոխանցեցինք:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտե

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտեի հետ մշակած ենք սերտ յարաբերություն: Հայկական Յնդասպանութեան 100-ամեակը միասնականօրէն ոգեկոչելու համագաղութային յանձնախումբին մաս կը կազմէ նաեւ ՀՕՄ-ը: Այս մարմինն մօտ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներն են ընկի. Աննա Պուլկարեան եւ ընկի. Վարսենիկ Սարգիսեան: Յանձնախումբը պիտի ունենայ իր անկախ արձանագրութիւնը կառավարութեան մօտ: Վարչութիւնս 1,000 տոլարով մասնակցեցաւ գրանցման ծախսերուն:

Մեր մասնաճիւղերուն հետ միասնաբար 12,000 տոլարով մասնակցեցանք Հայ Դատի աշխատանքներուն:

15 Յունուար 2012-ին, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտեի հրաւերով, Գանատայի Շրջանային մարմիններուն հետ ներկայ գտնուեցանք Լաւալի կեդրոնին մէջ կայացած խորհրդակցական հանդիպումի մը, հայ գաղութի հարցերը յուզող նիւթերու շուրջ, որոցմէ յիշենք՝ Հայոց Յնդասպանութեան 100-ամեակ եւ Գանատայի մէջ Յնդասպանութիւններու թանգարանի կառուցում, Հայնցի Դաստիարակութիւն ելլել...

21 Փետրուար 2012-ին, Կեդրոնական Կոմիտեի հրաւերով եւ իր ժողովասենեակէն ներս, Վարչութիւնս հեռաձայնային հաղորդակցութեամբ Օնթարիոյ մեր ընկերուհիներուն եւ քոյր միութիւններու շրջանային մարմիններու հետ խորհրդակցական հանդիպում մը ունեցաւ, ուր արծարծուեցան միութեանական անմիջական հարցեր, ապագայի ծրագիրներ, երիտարդ ուժի ներգրաւում եւ այլ հարցեր:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտեի հրաւերով Մոնթրէալի, եւ Թորոնթոյի մէջ ներկայ գտնուեցանք Winnipeg-ի մէջ կառուցուելիք Յնդասպանութիւններու Թանգարանի ծրագրի ներկայացման թանգարանի պատասխանատուներու հետ՝ խորհրդակցական հանդիպման:

Վարչութիւնս ներկայ գտնուեցաւ ՀՅԴ Կեդրոնական Կոմիտեի հրաւիրած Շրջանային Մարմիններու հանդիպման, ուր զեկուցեցաւ՝ Յնդասպանութեան 100-ամեակը, Սուրիահայութեան օժանդակութեան CAMAM-ի միջոցաւ հանգանակուած Գանատայի շրջանի ներդրումին, Օթթաուայի եւ Լաւալի մէջ Յնդասպանութեան յուշարձանի մը գետնդման, եւ այլ գաղութային հարցերու մասին: Վարչութիւնս Լաւալի Յնդասպանութեան Յուշարձանի գետնդման աշխատանքներուն մասնակցեցաւ նուիրելով 1,500 տոլար: Պէտք է յիշել նաեւ Լաւալի «Շուշի» եւ Մոնթրէալի «Սօւէ» մասնաճիւղերը նոյնպէս 1,500-ական տոլարով մասնակցեցան այս աշխատանքներուն:

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարան

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդութեան հետ մեր կապերը եղած են միշտ սերտ: Զանազան առիթներով կապ պահեցինք Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Խաժակ Սրբ. Արք. Յակոբեանի եւ Ազգային Վարչութեան հետ:

Առաջնորդ Սրբազան Հօր հրաւերով, 8 Սեպտեմբեր 2011-ին՝ Գանատայի Առաջնորդարանին մէջ մասնակցեցանք հանդիպման մը ուր արծարծուեցան Ազգային Վարչութեան աշխատանքներու ծանօթացում, Հայեցի Դաստիարակութիւն, կազմակերպութիւններու համագործակցութիւն եւ գաղութային զանազան մտահոգութիւններ :

Ներկայ գտնուեցանք Ս. Ծնունդի եւ տօնածառի լուսաւորման առթիւ Ազգային Առաջնորդարանէն ներս կատարուած ընդունելութեանց:

Ներկայ գտնուեցանք Կիլիկիոյ Կաթողիկոսութեան՝ «Նոր Կիլիկիա» ծրագրի կապակցաբար Ազգային Առաջնորդարանի կազմակերպած ճաշկերոյթին, ուր մեր մասնաճիւղերու եւ Շրջանային վարչութեան կողմէ միասնաբար 5,000 տոլարով օժանդակեցինք սոյն ծրագրին: Առ ի զանահատանք, Ազգ. Աջանորդարանը Օրհնութեան Գիր մը յանձնեց հայրենաշէն այս ծրագրի մեր գործակցութեան:

Մայիս 2012-ին, ընդառաջեցինք Լաւալի մէջ կայացած Ազգային Երեսփոխանական ժողովի հրաւերին: Վարչութեանս ներկայացուցիչն էր ընկի. Աննա Պուլկարեան, իսկ Մայիս 2013-ին Թորոնթոյի մէջ կայացած ժողովին մեր ներկայացուցիչն էր ընկի. Յասմիկ Բաբխեան:

Ս. Յակոբ Եկեղեցւոյ Նոր Ծաղիկ Երգչախումբ

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ հոգևոր հովիւ Արժ. Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեան համերգ մը ծրագրեց ի նպաստ Հայ Օգնութեան Միութեան Հայաստանի եւ Արցախի Որբախնամ ծրագրին: «Նոր Ծաղիկ» մանկապատանեկան երգչախումբի համերգը տրուեցաւ Կիրակի, 30 Հոկտեմբեր, 2011-ին, որմէ գոյացաւ 10,000 տոլար, որ փոխանցուեցաւ Շրջանային Վարչութեան:

Քոյր Միութիւններ

Սերտ յարաբերութիւն պահած ենք նաև մեր քոյր միութիւններուն հետ:

Ներկայ գտնուեցանք քոյր միութիւններու եւ կազմակերպութիւններու Ներկայացուցչական ժողովներուն ու ձեռնարկներուն, Հայ վարժարաններու հանդէսներուն, իսկ բացակայութեան պարագային նամակով իրենց հաղորդեցինք մեր սրտագին բարեմաղթութիւնները:

ՀՅԴ ԳԵՄ-ի Թորոնթոյի մէջ կայացած Պատգամաւորական ժողովի հրաւերին ընդառաջեցինք, ընկի. Իռեն Թիլիմեան ներկայացուց վարչութիւնս:

ՀՅԴ -ի տօնակատարութեանց ներկայ եղաւ ընկի. Աննա Պուլկարեան :
21 Յունուար 2012-ին ընկերուի Սեդա Մալխասեան ներկայ գտնուեցաւ ՀՅԴ Գանատայի Պատանիներու Հայաստանագնացութեան առթիւ կազմակերպուած ճաշկերոյթին: Վարչութիւնս առ ի քաջալերանք այս ձեռնարկին նուիրեց 1,000 տոլար:
23 Ապրիլ 2012-ին՝ ներկայ գտնուեցանք Մեծ Եղեռնի 97-ամեակի ոգեկոչման քաղաքական հաւաքին:

Ներկայ գտնուեցանք նաև Շուշիի ազատագրման 20-ամեակի ձեռնարկին և Հայաստանի Հանրապետության 94 և 95-ամեակներու պաշտօնական հանդիսությունաց:

Հորիզոն Շաբաթաթերթ

Վարչությունս իր տարեկան յատկացումէն անկախ, Հորիզոն Շաբաթաթերթի բացառիկին նուիրեց 2,000 տոլար (տարեկան 1,000 տոլար): Բոլոր մասնաճիւղերը իրենց յատկացումները կատարեցին և հովանաւորեցին Հորիզոնի «Մանկապատանեկան»-ի բաժինը:

Այսպիսով, շրջանիս երկու տարուայ ներդրումը հասաւ 29,470 տոլարի, Շրջանային վարչութեանս յատկացումը ներառեալ:

Յ.Յ. Դեսպանութիւն

Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման 20-ամեակին ինչպէս նաև նախագահ Սերժ Սարգսիւնանի ԱՄՆ այցելութեան առթիւ, ՀՀ ԱՄՆ-ու դեսպանատան կողմէ կազմակերպուած էր ճաշկերոյթ մը, որուն հրաւիրուած էր նաև Հայ Օգնութեան Միութիւնը: Ընդառաջելով հրաւերին՝ Գանատայի Շրջանային վարչութիւնը մաս կազմեց ՀՕՄ-ի պատուիրակութեան: Ճաշկերոյթը տեղի ունեցաւ Նիւ Եորքի մէջ, 23 Սեպտեմբեր, 2011-ին: Ընկերուիներ Աննա Պուլկարեան, Սեդա Մալխասեան, Վարդուկ Պեգճեան և Անի Օհանեան ներկայ գտնուեցան այս ճաշկերոյթին:

30 Հոկտեմբեր, 2011-ին Շրջանային վարչութիւնս այցելեց Գանատայի ՀՀ դեսպանատունը և հանդիպում մը ունեցաւ լիազօր դեսպան Պրն. Արմէն Եգանեանի հետ: Այս հանդիպման ներկայ էին նաև Օթթաուայի Սեւան մասնաճիւղի վարչական ընկերուիներ: Հանդիպման ընթացքին արծարծուեցան հայութիւնը ընդհանրապէս և ՀՕՄ-ը մասնաւորապէս յուզող հարցեր: Վարչութիւնս Պրն. Դեսպանին լայն տեղեկութիւններ փոխանցեց ՀՕՄ-ի Գանատայի շրջանի գործունէութեան մասին և ՀՕՄ-ի պատրաստակամութիւնը յայտնեց դեսպանատան կարիքներուն ի պահանջեալ հարկին :

Ինչպէս սովորութիւն դարձած է Հայաստանի վերանկախացման տօնին առթիւ՝ ՀՕՄ-ի մեծ ընտանիքը Դեսպանատան նուիրեց 4,650 տոլար 2011-ին և 4,350 տոլար 2012-ին:

4 Փետրուար 2012-ին Դեսպանատան հրաւերով ներկայ գտնուեցանք Հայաստանի բանակի հաստատման 20-ամեակի տօնակատարութեան:

3.3. Սփիւրքի Նախարարութիւն

Հայաստանի Հանրապետութեան Սփիւրքի Նախարարութեան կազմակերպած 2011-ի խորհրդաժողովին, օգտունով ընկի. Թամար Գապասագալեանի Հայաստան գտնուիլը վարչութիւն զինք նշանակեց ներկայացնելու ՀՕՄ-ի Գանատայի Շրջանը: Ժողովին ներկայ էին շուրջ 500 մասնակցողներ:

Հայաստանի Հանրապետութեան Սփիւրքի Նախարարութեան Տարեկիրքին համար փոխանցեցինք մեր ձեռնարկներու տեղեկութիւնները:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ՍԵՄԻՆԱՐ

2012 տարեշրջանի Սեմինարը տեղի ունեցաւ Cornwall, Ontario, 101 հոգիի ներկայութեամբ: Վարչութիւնս այս սեմինարին հրաւիրեց Համագայինի, ՀՄԸՄ-ի եւ ՀՅԴ ԳԵՄ-ի միութիւններէն երկու ներկայացուցիչներ: Երիտասարդներու ներկայութիւնը խրախուսիչ էր եւ նիւթերու ընտրութիւնը հետաքրքրական:

Դասախօսներն ու նիւթերն էին.-

- Կեդրոնական Վարչութեան ծրագիրներ, ընկի. Նայիրի Շահինեան
- Ethics – Կենցաղագիտութիւն՝ Նաթալի Ճիկերճեան
- SHERO Principles, Դեկավարութեան Սկզբունքներ՝ Ռեւալա Մուրատոլի
- Մարմնամարզութիւն, Անի Պարախումբի պարուսոյց Էվա Հայրապետեան

Ծնորհակալութիւն բոլոր դասախօսներուն որոնք սիրայօժար կերպով մասնակցեցան այս սեմինարին: Ծնորհակալութիւն նաեւ ընկի. Գլարա Յակոբեանին, որ վանգուվրաբեանակ դասախօս տիկ. Ռեւալա Մուրատոլիի ճամբու ծախսերը հոգաց:

2013-ի Սեմինարի թուականը կը զուգադիպէր Համիլթընի «Արեւ» մասնաճիւղի հիմնադրութեան 100-ամեակին: Վարչութիւնս քաջալերելու համար Համիլթընի մասնաճիւղի այս շատ կարևոր հանգրուանը, որոշեց Սեմինարը կազմակերպել Համիլթընի մէջ եւ շրջապատոյտ մը Նիակարայի շրջանին մէջ:

Դասախօսներն ու նիւթերն էին.-

- “Orphans of the Genocide” Ժապաւէնի ցուցադրութիւն, Պրն. Պարէտ Մարունեան
- Լաւ եւ առողջ ծեռանալ, դեղագործ Տիկ.Անիթա Արզումանեան
- «Ուր կայ կամք՝ կայ միջոց», La Peau հաստատութեան սեփականատէր Գարլա Խանճեան
- Զումպա մարզանք, ընկի. Սօսի Ասատուրեան

Սեմինարին մասնակցեցան 140 ՀՕՄ-ականներ եւ համակիրներ: Ներկաները նիւթերը գտան շատ հետաքրքրական եւ այժմէական:

Վարչությունս իր գնահատանքի խօսքը ունի սեմինարի բոլոր մասնակցողներուն, եւ Արեւ մասնաճիւղի 100-ամեակի տօնակատարութեան իրենց ներկայութեան: Ընդհանրապէս խօսք ունինք նաեւ Համիլթընի «Արեւ» մասնաճիւղին, սեմինարի ընթացքին իրենց հիւրասիրութեան:

ԿՐԹԱԿԱՆ

Շրջանային Վարչութեան Կրթաթոշակ

2011-2012 շրջանին ստացանք ութը դիմումագրեր: Կրթաթոշակի յանձնախումբը նկատի ունեցաւ 8 թեկնածուները:

Կրթաթոշակի յանձնախումբի որոշումով եւ Շրջանային Վարչութեան վարչապետով հետեւեալ ուսանողներէն իւրաքանչիւրը արժանացաւ 1000-ական տոլարի:

Կրթաթոշակ ստացան հետեւեալ ուսանողները:

- | | |
|---------------------|----------|
| • Պօղոսեան Քրիսթա | Թորոնթօ |
| • Օհանեան Տանիէլ | Թորոնթօ |
| • Պէզճեան Արէն | Մոնթրէալ |
| • Թիլիմի Նայիրի | Թորոնթօ |
| • Յովհաննէսեան Մարի | Լաւալ |
| • Պոյաճեան Գէորգ | Լաւալ |
| • Շէյթանեան Նանոր | Լաւալ |
| • Փալանճեան Նանոր | Մոնթրէալ |

2012-2013 տարեշրջանին, հետեւեալ ուսանողներէն իւրաքանչիւրը արժանացաւ 1000-ական տոլարի կրթաթոշակի:

- | | |
|----------------------|----------|
| • Բաբխեան Շահէ | Թորոնթօ |
| • Ներսէսեան Տանիէլ | Թորոնթօ |
| • Շէյթանեան Նանոր | Լաւալ |
| • Տատաղեան Յովսէփ | Լաւալ |
| • Պոյաճեան Գէորգ | Լաւալ |
| • Պէզճեան Արէն | Մոնթրէալ |
| • Փալանճեան Նանոր | Մոնթրէալ |
| • Պիրքիլեան Նայթալի | Մոնթրէալ |
| • Մանուկեան Անն-Մարի | Մոնթրէալ |
| • Արապեան Լիզա | Մոնթրէալ |

Կրթական Օճախետր

Վարչությունս 2011-2013 տարեշրջանին իր նիւթական օժանդակութիւնները կատարեց կրթական հաստատութիւններուն, ամենօրեայ եւ շաբաթօրեայ վարժարաններուն, ամառնային ճամբարներուն, ծաղկոցներուն եւ Մոնթրէալի

մանկամսուրին, նաև ըստ կարելիության ընդառաջեց տարեշրջանի ընթացքին անոնց կողմէ եղած բոլոր հրաւերներուն, ըլլան տօնակատարութիւններ, ելոյթ կամ ամսավերջի հանդէսներ:

ՔԱՐՈՉՉԱԿԱՆ

20-րդ Պատգամատրական ժողովի աւարտին, Օգոստոս 2011-ին, Հորիզոն Ծաբայթաթերթին մէջ լոյս տեսաւ ՀՕՄ-ի Գանատայի Երջանային Վարչութեան 2009-2011 տարեշրջանի ամփոփ տեղեկագիրը:

Լրատու

2012-ին՝ Հորիզոն Ծաբայթաթերթին մէջ 32 լայնածաւալ էջերով ներկայացուած Լրատուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակով ձօնուած էր Հայ Գիրի տարուան, իսկ 2013-ի թիւը ձօնուեցաւ Հայ Մօր:

Կայքէջ

Մեր կայքէջը արդէն իսկ այժմէականացած է ու բոլոր նիւթերը տեղաւորուած: Հոս կ'ուզենք մեր շնորհակալութիւնները յայտնել Պրն. Կարի Պօղոսեանին եւ Անդրանիկ Քեպապճեանին կայքէջի պատրաստութեան իրենց բերած օժանդակութեան եւ սիրայօժար օժանդակութեան:

Դիմատետր (Facebook)

Վարչութիւնս ունեցաւ իր դիմատետր (Facebook)-ը: Մասնաճիւղերը իրենց ներկայացուցիչներով պիտի օգտագործեն զայն, իրենց ձեռնարկներու ծանուցումները տեղադրելու այս դիմատետրին վրայ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Եկամուտի Աղբիւրներ

□ Օրացոյց-Գրքոյկ

2011-2013-ին Մոնթրէալի, Լաւալի, եւ Թորոնթոյի մասնաճիւղերու ընկերուհիներէ բաղկացած յանձնախումբի ջանքերով, դարձնալ իրագործուեցաւ Օրացոյց-Գրքոյկի ծրագիրը: Հասոյթին մեծ բաժինը ապահովուեցաւ ծանուցումներէ, որուն վրայ աւելցան ազգայիններու եւ ՀՕՄ-ի ընկերուհիներու նուիրատուութիւնները:

2012-ին Dundas Kipling Pharmacy-ին հովանաւորեց օրացոյց գրքոյկի կողքը իսկ 2013-ին Sleep Comfort հաստատութիւնը:

2012-ին Օրացոյց գրքոյկէն գոյացաւ 26,725 տուար, իսկ 2013-ին՝ 24,3930 տուար:

□ Մրտ ՄիոՏ

Մոյն ծրագիրը իրականացաւ աւելի մեծ թափով եւ իր մէջ ներառեց 180 ընկերուհիներ: Ուրախ ենք յայտարարելու, որ մեր տասը մասնաճիւղերը իրենց մասնակցութիւնը կը բերեն Մրտէ Միոտ ծրագրին:

2012-ին ծրագրեն գոյացաւ 16.400 տոլար, իսկ 2013-ին՝ 15.800 տոլար:

□ ԵԿԱՄՈՒՏԻ ԱՂԻ ԿՊԲԻՐԱԵՐ

Ընթացիկ շրջանին զանազան առիթներով, օտար կազմակերպութիւններ նիւթական յատկացումներ ըրին վարչութեանս, որոնցմէ կարելի է յիշել CANARM Children Relief Foundation, « CN & CN Employee's Pension Fund, United Way of Calgary, United Way of York Region, CIBC, NATCO, Telus, Massonic Foundation եւ Scotia Bank: Այս բոլոր նուիրատուութիւնները կատարուեցան մեր ընկերուհիներու եւ ազգայիններու ջանքերով:

Կտակներու եկամուտ

2011-2012 ին ընկի. Արմէնուի Գոլովեան իր մօր յիշատակին հիմնեց Տիգրանուի

Արթինեան Թոնտը: Թոնտի ընդհանուր գումարն է 50,000 տոլար որ պիտի ամբողջացուի 5 տարուան ընթացքին, տարին 10,000 տոլարի փոխանցումներով:

2011-2013-ին Բասդրմաճեան հիմնադրամէն ստացած ենք 12,000 տոլարի նուիրատուութիւն մը, իսկ ճեսուրեան ֆոնտէն՝ 2,000 ամն. տոլար (տարեկան 1000 ամն. տոլար):

Տարտուղք

Բոլոր մասնաճիւղերը կատարած են իրենց տարետուրքերու վճարումները:

Ֆոնտեր եւ Հիմնադրամ

Մնայուն ծրագիրներու ֆոնտեր՝

- ՀՕՄ-ի Արցախի «Սօւէ» Մանկապարտէզ
- ՀՕՄ-ի Զաւախքի Թոնտ
- ՀՕՄ-ի Անմիջական Օգնութիւն
- ՀՕՄ-ի Մօր ու Մական Կեդրոն
-

Անձեռնմխելի՝

- ՀՕՄ-ի Հիմնադրամ
- Տէր եւ Տիկին Նուպար Ճէսուրեան Թոնտ
- Նայիրի Պօղոսեան-Նազարեան Թոնտ
- Գրիգոր եւ Ռազմուի Ծախիւնեան Թոնտ
- Ծովակ Խաչերեան Թոնտ
- Պօղոս եւ Մարի Սահակեան Թոնտ
- Վարուժան Պաթաճեան Թոնտ
- Տիգրանուի Արթինեան Թոնտ

Ֆոնտերու գումարներու կրած փոփոխութիւնները տեսնել նիւթական տեղեկագրին մէջ:

Յատկացումներ

□ ԲՆՃԱՌԻԿ ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ

Ընթացիկ տարեշրջանի յատկացումներուն կը միանան հետևեալ բացառիկ յատկացումները.-

- Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդարանի «Նոր Կիլիկիա» ծրագրին նուիրած ենք 5,000 տոլար (բոլոր մասնաճիւղերու աջակցութեամբ):
- Հայ Դատի աշխատանքներուն յատկացուցած եւ փոխանցած ենք 12,000 տոլար: Այս գումարը յառաջացած է մեր մասնաճիւղերէն եւ Երջանային Վարչութեանս կողմէ:
- Ախորեանի Մօր ու Մանկան Կենդանի Ultrasound սարքին 15,000 տոլար
- Գեմպրիճի Հայ Կենդանի նորոգութեան 3,500 տոլար
- ՀՄԸՄ-ի Հայաստանագնացութեան 1,000 տոլար
- ՀԵԴ ԳԵՄ վանաձորի ճամբարին 1,000 տոլար
- Աւստրալիոյ Երջանին Վարչութեան 500 տոլար
- Յունաստանի Երջանային Վարչութեան 700 տոլար
- Dorcas Aid Ափրիկէի սովահարներուն 1,000 տոլար
- ՀՅԴ Պատանեկան Միութեան Հայաստանագնացութեան 1,000տոլար
- Արարատ Իսկենճեան Թանգարան (Պրն. Պարէտ Մարոնեանի «Women of 1915» ֆիլմի պատրաստութեան առ ի քաջալերանք 6,000 տոլար
- Լաւալի Յնդասպանութեան Յուշարձանին CCLMGA 1,500 տոլար
- Պուլկարիոյ մանկապարտէզ եւ հայերէնի դասընթացք 2,000 տոլար
- Զաւախքի միաւորի հիմնադրութեան 10-ամեակի առթիւ 500 տոլար
- Սուրիոյ Համազգայինի Հայագիտական Հիմնարկին 1,000 տոլար

2011-2013 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ
ՀՕՄ-Ի ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐՈՒ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ

ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐ

\$648,769

ՇՐՁԱՆԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\$252,124

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

\$ 900,893

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Վարչությունս պարտք կը զգայ ի սրտէ շնորհակալութեան խօսք ուղղելու Բարձր. Տէր Խաժակ Սրբ. Արքեպիսկոպոս Յակոբեանին, մեր հոգևոր հայրերուն, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէին, քոյր միութիւններուն, Հորիզոն Շաբաթաթերթի խմբագրութեան եւ անձնակազմին, Սրտէ Սիրտի եւ Գրպանի օրացոյցներու նուիրատուներուն, հայրենիքի մեր ծնողազուրկ ուսանողներու եւ երեխաներու խնամակալներուն, տարեկան հանգանակութեան, դասախօսներուն, Ազգ. վարժարաններու տնօրէններուն եւ ուսուցիչներուն, իրաւաբան Պրն. Արմենակ Գազանճեանին, Անդրանիկ Քէպապճեանին, Լիզա Գարբուզեանին եւ յատկապէս ՀՕՄ-ի համայն բարեկամներուն եւ բարերարներուն:

Յատուկ շնորհակալութեան խօսք ունինք ընթացիկ տարեշրջանի Երջանային վարչութեանս գործունէութեան ծրագրային եւ կազմակերպական աշխատանքներուն սատարող յանձնախումբերու անդամներուն, ՀՕՄ-ի Գանատայի Երջանի տասը մասնաճիւղերու վարչութիւններուն եւ իր բոլոր անդամներուն, որոնք կը կազմեն մեր գործնական աշխատանքի ամենէն հիմնական միաւորները:

ԵԶՐԱԾԱԿՈՒՄ

Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Երջանային Վարչութիւնը 21-րդ Պատգամատրական Ժողովին կը ներկայացնէ նիւթաբարոյական իր երկամեայ գործունէութեան տեղեկագիրը՝ առ ի քննարկում եւ արժեւորում:

Երջանային Վարչութեանս երկամեայ այս տեղեկագիրը կը պարզէ 2011-2013 տարեշրջանի աշխատանքի լայնածաւալ գործունէութիւնը որ յստակ պատկերացումն է Վարչութեանս եւ իր տասը մասնաճիւղերու համագործակցութեան:

ՀՕՄ-ի Գանատայի Երջանային Վարչութիւնը հպարտ է իր շուրջ համախմբուած նուիրեալներու փառանքով: Այս ուժն է, որ յոյս ու եռանդ կը ներշնչէ, իր գործունէութիւնը շարունակելու եւ ՀՕՄ-ի բոլոր ծրագիրները իրականացնելու:

Վարձքը կատար բոլորին: